

ցես եւ մնացես ողջ եւ առողջ ի փառս մեծագու-
նի Աստուծոյ եւ ի պարծանս Եկեղեցւոյ. ամեն : »

Գրեցաւ ի ՌՃԿ բոլին յԱպրիլի ԺԶ.
Ի դուռն սուրբ Արթուրոյ Էջմիածնի :

vous bien pour la plus grande gloire de Dieu et
pour l'honneur de l'Eglise. Amen.

« Fait l'an 1160, le 16 avril.
« Au saint-siège d'Edchmiadzine. »

ՏԵՍԱՐԱՆՔ ԵՒՐՈՊԱՅ

ԵՐԿԱՔՈՒՂԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՊՕԼՍԵՅԻՈՅ ՄԸ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿ :

Սիրելի Եղբայր .

Մարտիկայէն Փարիզ երբայու համար երկա-
քուղին բռնելու գնացինք, բայց ուշ հասանք.
շոգեկառքը ճամբայ ելած ըլլալուն՝ հարկ եղաւ
որ մէկ երկու ժամ սպասենք. այն միջոցին Մար-
տիկացի բարեկամս պտրոցուց զիս երկաքու-
ղոյն կայարանին մէջ ու ամէն բան մէկիկ մէկիկ
բացատրեց : Տեսածներս հոս համառօտեմ, յու-
սամ քե ախորժելի կըլլայ քեզի :

Շոգեգործւոյն մէջ ջրին ինչպէս շոգի դառնալը,
այն շոգիով անխներուն ինչ կերպով պտրտիլը,
երկրքէ ճամբուն վրայէն ինչպէս առաջ երբայը
գրեցս աւելորդ կըհամարիմ, վասն զի մտքով ալ
կրնաս երեւակայել՝ ինչպէս որ ես ալ երեւակայե-
ր էի : Բայց քանի մը նիւթական բաներու նկարա-
գրութիւնն ընեմ հոս, որ առանց տեսնելու հաս-
կընալը աւելի ալ դժուար է :

Նախ *կայարան* ըսուածը ահագին ընդարձա-
կութեամբ շէնք մըն է՝ այնչափ մեծ որ նմանը
տեսած չունիս (1) : Շէնքին ծածքը ապակի է՝ երկը-
քէ գօտիներով բռնուած. եւ որովհետեւ խիստ շատ
բարձր է շէնքը, այն երկաքները որչափ ալ հաստ
ըլլան՝ բարակ-բարակ քեղերու պէս կերենան :
Ներսի կողմէն երկու քովերը մէյմէկ ձեմելիք կայ
լայն ու շիւր-շիտակ. անոնց վրայէն կըքային
ճամբորդները, բեռներն ալ բեռնակիրները սայ-
լակներով շուտ շուտ կըտանին ու կըբերեն :

Կայարանին մէջ շատ մը երկաքուղիներ կամ
երկրքէ ճամբաներ կան՝ զիմ զիմ. կառքերը այն
գծերուն մէկէն մէկալը անցընելու համար՝ գեղե-
ցիկ հնարք մը հնարեր են. այսինքն նոյն շէնքին
տակը մեծամեծ շարժական բոլորակներ շինե-
ր են որ *շրջուն բոլորակ* կըսուին (1, 4). երբոր ուզեն

կառք մը մէկ երկաքուղիէն մէկալին անցընել,
կընեն ու այն բոլորակին վրայ կըտանին. այնու-
հետեւ բոլորակը կըդարձընեն ու այնպէս կըյար-
մարցընեն որ անոր վրայի երկաքները երբան
շտկուին միւս երկաքուղոյն գծին շտկութեամբը.
անկէց ուրիշ բոլորակի մը վրայ կ'անցընեն, եւ
նոյն գործողութիւնը կ'ընեն՝ մինչեւ որ կառքը
իրենց ուզած գծին վրայ գտնուի :

Շատ մը պաշտօնատէրներ կան կայարանին
մէջ, որ իրենց հագուստներէն ալ կըճանցցուն.
ասոնց զլիսաորը *կայարանապետ* է, երկրորդ՝
անոր փոխանորդը, երրորդ՝ պահանորդները,
եւ չորրորդ բեռնակիրները. խելքէ դուրս բան է
ասոնց ամենուն գործունեութիւնն ու անշփոք
արագութիւնը՝ շոգեկառքին ճամբայ ելած ատեն-
ները :

Կառքերուն մէկ շարքի վրայ կեցած բազմու-
թիւնը, որ կարծեմ *կառաշարք* (train) կընայ
ըսուիլ, իրարմէ տարբեր ձեւերով կառքերէ
ձեւացած է : Ամենէն ծայրը կեցած է *շոգեգործին*
(locomotive) որ բովանդակ այն վիշապաձեւ
կառաշարքին տարազանքի հոգին կամ հրաշունջ
գլուխն է (26) : Անոր ետեւէն կուգայ *ածխարանը*
(tender) (11), յետոյ *բեռնակառքը* (fourgon à бага-
ges) (12) ուր դիզուած կըլլան ճանապարհորդաց
սնտուկներն ու կապոցները. յետոյ *ճշգրտացնիչը*
(diligence) (13), անոնցմէ ետքն ալ բուն երկա-
քուղոյն կառքերը (wagon) որ շատ տեսակ են :
Բուն ճանապարհորդաց նստելու կառքերը երեք
աստիճան կամ դաս (classe) բաժնուած են. առա-
ջին դասու կառքերը սովորաբար ուրիշներէն
աւելի գեղեցիկ ու զարդարուն են զըսուանց, մի-
ջերինն ալ նստարանները աւելի կակուղ ու փա-
փուկ (13). երկրորդ դասու կառքերը առաջին-

ներէն ածան են, մէջի նստարաններն ալ քիչ մը պինտ (14). Իսկ երրորդին՝ որ աւելի ալ ածան է՝ մէջի նստարանները պարզ տախտըկէ են, պատուհաններն ալ բաց (25) : Եւ որովհետեւ երկաթուղիով տեղէ տեղ ամէն տեսակ կենդանիներ ալ կը տանին, անոնց համար իրացընէ *սխուր* նման կառքեր շինուած են՝ վրանին գոց (19) : Գեղերէն դէպ ի քաղաքները կաթ տանելու համար ալ զատ կառքեր կան՝ ծակ ծակ շինուած (22) : Մեծ կառք մըն ալ կայ քղբատարի, եւ անոր մէջ նամակները կարգի կը դրուին որ շոգեկառքին անցած տեղերը բաժնուին եւ կամ երբայու տեղը տարուին (17) :

Զուարճալի բան մըն ալ տեսայ ճամբան որ հոս պատմեմ : — Կայարանին տակը կեցած ու սպասած ատեննիս անդիէն ճեպընքաց մը եկաւ հինգ ձիով, մէջը լեցուն ճանապարհորդ, վրան ալ լեռան պէս բեռներ կապուած : Այն կառքը շիտակ գնաց մտաւ ծածքի մը տակ. հոն շուտ մը ձիերը արձըկեցին, կառքին տակէն չորս հատ հաստ ու ամուր չուաններ անցուցին՝ ծայրերը ծածքին մէկ կողմը պտուտակի մը (պօճուրդատ) կապուած : Երկու հոգի այն պտուտակին անիւները այնպիսի կերպով մը դարձուցին որ չուանները հաստ ու կտոր երկաթի մը վրայ պլլուեցան, ու կառքը իր տակի անիւներէն ու լիսեռներէն բաժնուեցաւ վեր ելաւ, օդուն մէջ կախուածի պէս մնաց. այն ատեն տակը տարին չորս անուով տափակ մէկ սալ մը դրին, ճեպընքացը անոր վրայ նստեցուցին, լաւ մը կապեցին, ու տարին երկարուղոյն կառաշարքին մէջ կեցուցին (5) :

Ճամբայ ելելու ատենն եկածին պէս զանգակը զարնուեցաւ, շոգեգործին սուր ձայնով մը սուլեց, ու սկսանք կրակի պէս առաջ երթալ, վազել, բռնել, սլանալ : Մինչդեռ ես գմայած դէպ ի երկու կողմս նայելով՝ գեղերն ու սիրուն դաշտերը աչքիս առջեւէն փախստականի պէս կը տեսնեի, մեյմալ յանկարծ մօր ու խաւար տեղ մը մտանք ու նոյն սաստկութեամբ կը բռնէինք : Քովիններս ըսին քէ հիմա գետինն տակն ենք. սարսափը գլխ բռնեց. ալ չէի գիտեր քէ ինչ կըլլամ, որ կերբամ, ետն քէ առաջ, վեր քէ վար. կառքերուն հանած դղրդումը այնպէս սոսկալի բան որ մարդուն ականջը կը խլանայ. շոգեգործիէն ալ ատեն ատեն կրակի կայծեր կը բռնէին ու աւելի անաւորութիւն մը կուտային տեղոյն ու խաւարին : Վերջապէս տասը վայրկեանի չափ այն դժոխային կամ սանդարամետական ճամբորդութիւնն ընե-

լին ետեւ զուրս ելանք, նորէն լոյս տեսանք, ու կարծես քէ օրերով անդիի աշխարհքը գնացեր էի՝ այնպէս ուրախացայ նորէն հոս գտնուելու : Այս է եղեր *ստորուղի* (tunnel) ըսածին, որ լեռան տակը բացուած ու երկու կողմէն կամարաձեւ աղիւսակերտ հաստատուն շէնքով ճամբայ մըն է, որ շատ տեղ կը գտնուի, քեպէտ եւ ամէնն ալ նոյն երկայնութիւնը չունին (5) :

Ասոր պէս շոգեկառքին ձորերու վրայէ անցած տեղուանքն ալ կամուրջի պէս կամար կամար քարաշէն-տեղուանք կան որ Պօլսոյ ջրիղջներուն (*պէնսերուն* կամ *քէմէրներուն*) կընմանին քիչ մը (2) :

Ճամբուն վրայ տեղ տեղ գեղեցիկ կերպով շինուած տներ կան որ *հանգրուան* (station) կըսուին (6). շոգեկառքը հոն հասնելուն պէս կը կենայ, ձգելու ճամբորդները կը ձգէ, առնելու ճամբորդները կ'առնու ու նորէն ճամբայ կեցէ : Հանգրուաններէն ոմանք ուրիշներէն աւելի մեծ են, ու հոն որ հասնին ճամբորդները կիշնան, ուտելիք եւ ըմպելիք կը գտնեն պատրաստ, քառորդի մը չափ կուշանան ու նորէն կը մտնեն կառքերը : Տեղ տեղ ալ *ջրհաններ* կան հանգրուաններուն մօտ, եւ հոն շոգեգործիները ջուր կ'առնուն (8) :

Քանի մը տեղ հանդիպեցանք որ երկարուղոյն տակի փայտէ գերանները փտտած ըլլալով՝ գործաւորները զանոնք փոխելու կաշխատէին (7) :

Շոգեկառքով եղած ճամբորդութեան ատեն երբեմն երբեմն փորձանքներ պատահիլը իրացընէ զարմանալի պիտի չըլլայ՝ երբոր մէկը մտածէ քէ ինչ սոսկալի ոյժ ու արագութիւն է որ կը բանեցընեն մարդիկ այս ճամբորդութեան համար : Սակայն մէկ կողմանէ այս ալ ճշմարիտ է որ ամենայն կարելի զգուշութիւնները կընեն միշտ ու ընկու կաշխատին՝ որպէս զի փորձանքներուն ստաշքը առնուի : Ասոր համար ճամբուն վրայ տեղ տեղ բարձր բարձր ձողեր կանգնուած են որ *աղաքաւար* կըսուին (6). ծայրերնին ալ փայտէ բոլորակներ որ հեռուանց կը տեսնուին, մէկ երեսնին կարմիր ներկուած՝ մէկալը կանանց : Անոնց ամէն մէկուն քով կեցող պաճապանները երբոր կուգն հեռուանց իմացընել մեքենագործին քէ պետք է կառաշարքը կեցընել, փայտէ բոլորակը այնպէս կըշտկեն որ կարմիր երեսը դէպ ի անոր դառնայ. երբոր հարկ ըլլայ միայն ծանրացընել քալուածքը, կանանց երեսը կը դարձընեն. իսկ երբոր ճամբուն վրայ արգելք մը չկայ, բոլորակը քովընտի կը դարձընեն : Սովորաբար այն ձողերուն քով կե-




1. — Viaduc à dix-neuf arches avec parapet.



2. — Train sortant d'un Tunnel passant sous un monticule.



3. — Tracé sur une plaque tournante pour le chemin de fer.



4. — Manœuvre exécutée par un treuil.



5. — Station. — Chef de station. — Surveillant. — Signal, face à la voie.
Trompe, arrêt, arrêt, ralentissement, départ, la voie libre.



6. — INTÉRIEUR D'UNE GARE.

Voyageurs sur les quais, près des salles d'attente et des bureaux des bagages. — Série de plaques tournantes. — Chef de gare. — Surveillant.
Hommes de gare en tournantes de plaques. — Facteurs.



7. — Fosseur, chef d'équipe et hommes d'équipe, relevant les rails et remplissant les traverses pour les traverses injectées au collier de rails.



8. — Pompe d'élévation en grès hydraulique.



9. — Changement de voie par les signaux.



10. Locomotive. — 11. Tender. — 12. Fourgon à bagages. — 13. Manœuvre sur un treuil. — 14. Fourgon plat. — 15. Première classe. — 16. Châssis de poste sur un treuil. — 17. Wagon-poste. — 18. Marchandise. — 19. Écarte. — 20. Conteneur. — 21. Écarte. — 22. Wagon à lait. — 23. Train de charbon.

ցող պահապաններն ալ ձեռքերնին դրօշակ մը բռնած կըշարժեն՝ ճամբուն ապահովութիւնն իմացընելու համար, երբեմն ալ ձեռքերնին դէպ ի ճամբան երկընցուցած կըկենան՝ նոյն մըտքով (6) :

Երկաթուղիներուն վրայի երկաթները տեղ տեղ իրարու հետ խառնուածի պէս կ'երեւան. այսպիսի տեղուանքը կառաշարքերը մէկ գծէն մեկալը անցընելու համար են, եւ այս վախճանաւ գործիք մը կայ հոն *արքան* ըսուած՝ որ պէտք եղած ատենը կըդարձընեն, ու անով երկաթները դէպ ի մէկդին կամ մեկալ դին քաշելով՝ կառաշարքին ընթացքը դիւրին կերպով մը կըփոփոխեն (9) :

Ուրիշ շատ զարմանալի գիտելիքներ ալ կան այս հրաշալի գիւտին վրայ, բայց անոնք գրքերու մէջ ալ կըգտնուին. իմ միտքս այն էր որ այսօրուան նամակիս մէջ երկաթուղիներուն համառօտ մէկ ստորագրութիւնն ընեմ քեզի. յուսամ որ զո՞ն կըլլաս : Ողջ լեր :

Այս նամակին խօսքերուն իբրեւ զգալի բացատրութիւն դրինք անա հոս երկաթուղիներուն գըլխաւոր մասանցը ճիշդ մէկ պատկերը՝ գաղղիարէն ամսագրէ մը առնելով : Եւ որովհետեւ պատկերին մէջի խօսքերը գաղղիարէն են, մենք բուահամարներով անոնց հայերէնը նշանակենք՝ ի դիւրութիւն մերազնեայ ընթերցողաց .

1. Կայարանի մը ներսի տեսքը. — ձեմելիքներուն վրայ՝ սպասարաններուն քով գտնուող ճանապարհորդներ. — Շրջուն բոլորակներ. — Կայարանապետ. — Փոխանորդ կայարանապետի. — Պահանորդ. — Բոլորակ դարձընողներ. — Բեռնակիրներ :

2. Կամարակալ ճանապարհ :

3. Լեռան տակը շինուած ստորուղիէ մը անցնող կառաշարք :

4. Շրջուն բոլորակի վրայ դրուած սայլ :

5. Պտուտակով վերցուած ձեպընթաց :

6. Հանգրուան. — Հանգրուանապետ. — Պահանորդ. — Ազդարար. կարմիր երեսը՝ կենայուն ճան, կանաչը՝ ծանր բաշխու, կողմնականը՝ առաջ երթալու :

7. Երկաթուղին շտկելու աշխատող գործաւորք :

8. Ջրհան, կամ ջրաբաշխական մեքենայ :

9. Արցան ըսուած գործիքով ճամբայ փոխել :

10. Շոգեգործի .

11. Ածխարան .

12. Բեռնակառք :

13. ձեպընթաց :

14. Երկրորդ դաս :

15. Առաջին դաս :

16. Թղթատար կառք :

17. Նամակատուն :

18. Վաճառք :

19. Ախոռ :

20. Ռանկիւրայ կամ ուղեպան :

21. Գոմ :

22. Կարի կառք :

23. Երրորդ դաս :

Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

ՀԱՅԻ Ի ՌՈՒՍՍՍՏԱՆ

Մեր ազգին Ռուսաստանի մէջ գտնուած մասին պատմութիւնը շատին անծանօթ է, ու վերջի դարերուս ազգային դէպքերը գիտնալ ուզողներուն համար շատ հետաքրքրական տեղեկութիւն : Մոսքուայի Լազարեան ճեմարանին ազգասէր ու մեծապատիւ հիմնադիրները, եւ մանաւանդ այժմու հոգաբարձուները՝ Ադա Յովհաննէս եւ Ադա Խաչատուր Յովակիմեանք Լազարեանց, մասնաւոր գովութեան եւ ազգային շնորհակալութեան արժանի են արդարեւ նաեւ անոր համար որ փոյք եւ խնամք ունեցեր են հաւաքել ու տպել տալու

LES ARMÉNIENS EN RUSSIE.

L'histoire des colonies arméniennes de la Russie est peu connue, malgré sa grande importance et le vif intérêt qu'elle mérite de la part des hommes curieux de connaître les événements accomplis au sein de notre nation. Les généreux fondateurs de l'Institut des langues orientales de Moscou, et en particulier les curateurs actuels de ce bel établissement, MM. Jean et Christophe de Lazareff, ont acquis un titre de plus aux éloges et à la reconnaissance de leurs compatriotes, par le zèle et le soin qu'ils ont montrés en faisant recueillir et en publiant à l'imprimerie